ԳԼՈՒԽ ԽԳ.

Աքսոր Եղիա Եպիսկոպոսի։ Գերիէլ Նաւաւն ուխտաւորաց և Յովհաննէս վարդապետի։ Ջայրուեթ ամիրայից։ Հրամարտակ Արքայի վասն կաթողիկէ Հայոց։ Ժողով 'ի Մայր եկեղեցին, ընտրութիւն նոր խորհրդականաց Երուսաղէմի։ Խաչագրութիւն կանոնական բանից։

Ի ՀԱՄՍԱՆԻ հրամարտակի Արքային յԵրուսաղէմ, Գաբրիէլ Պատրիարք առաքեաց զԵղիա Եպիսկոպոս ընդ Պողոսի Յակոբ վարդապետի 'ի Կեսարիա, Եղիա յաքսոր, և Յակոբ 'ի Նուիրակ, յանձն արարեալ նմա զհրամարտակն պատուիրելով առանձին, 'ի հասանել նոցա 'ի Կեսարիա տալ զայն Ստեփաննոս Եպիսկոպոսի առաջնորդի տեղւոյն 'ի դործադրութիւն։ Առքա նաւեալ հասին 'ի Տարսոն Կիլիկեցւոց, ուր գժտեցաւ Եղիա ընդ Յակոբայ, նախատելով զնա բազմադիմի բանիւք՝ և մեաց ինքն անդէն 'ի քաղաքին, և Յակոբ մեկնեալ 'ի նմանէ գնաց 'ի Կեսարիա, եւ եդիտ զժողովուրդն 'ի տառապանս յերեսաց հարկապահանջութեան և 'ի սաստիկ սովու՝ յորմէ մեռանէին բազումք, եւ Բդեշխ երկրին ցասուցեալ ընդ Աւետիս Եպիսկոպոսի վանահօր վանաց Ս. Կարապետի՝ կամէր կործանել զնոր շինուածս վանաց, և գլխաւորք ազգին մոռացեալ զնեղութիւնս իւրեանց, եառուն նմա 25,000 դահեկան տուգանս և զերծան 'ի ձեռաց նորա։ Տիւզեան Կարապետ, Յակոբ և Պողոս չելեպիք, որք աքսորեալ էին 'ի վանս Ս. Կարապետին, տեսեալ զՅակոբ վարդապետ մխիթարեցան, եւ հարցանէին զվիճակէ Աթոռոյն, զողջունէ Պատրիարքին և զմիաբանութեան, և խոստացան առնել բարիս զկնի ազատութեան իւրեանց, (1821. 'ի Նոյեմբերի)։ Իսկ Եղիա Եպիսկոպոս նստեալ 'ի Տարսոն քաղաքի գրեաց բազում անգամ 'ի Կոստանդինուպոլիս առ Պողոս Պատրիարք, եւ թախանձանօք աղաչէր զնա ազատել զինքն յաքսորանաց, խոստանայր հրաժարիլ 'ի միաբանութենէ Աթոռոյն, եւ խնդրէր վիճակ առաջնորդական, և Պողոս գրեաց առ նա դալ 'ի Կոստանդինուպոլիս, և նորա ընկերացեալ ընդ Գրիգոր Գալֆայի, այն ինչ ազատելոյ յաքսորանաց, զնացին